Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
օգոստոսի 19-ի N 1050 - Ն որոշման

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՄԵՇԻ ՄԻՍ ԱՐՏԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հնդկաստանի Հանրապետությունում գոմեշի միս արտադրող կազմակերպություններին ներկայացվող չափանիշներն են՝

1) մսի արտադրության առնվազն 10 տարվա աշխատանքային փորձը.

2) ընդհանուր մեկ արտադրական տարածքում տեղակայված՝ միջազգային ստանդարտներին համապատասխան սեփական սպանդանոցը, մսի վերամշակման արտադրամասը և սառցարանը.

3) միջազգային արտոնագրող մարմինների կողմից տրված՝ վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (HACCP) համակարգի և ստանդարտների միջազգային կազմակերպության նվազագույնը ISO 9001:2000 ստանդարտի արտոնագրերը.

4) կազմակերպության ապրանքային նշանի կամ գործարար համբավն արատավորող հիմնավորված տեղեկությունների հայտնի չլինելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
օգոստոսի 19-ի N 1050 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԳՈՄԵՇԻ ՄՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

1. Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետություն արտահանվող գոմեշի մսի յուրաքանչյուր խմբաքանակի պատրաստման նկատմամբ հսկողություն է իրականացնում Հնդկաստանի Հանրապետությունում մշտապես գտնվող Հայաստանի Հանրապետության սննդի անվտանգության գծով ներկայացուցիչը (այսուհետ՝ ներկայացուցիչ):

2. Ներկայացուցիչը Հայաստանի Հանրապետություն արտահանվող գոմեշի մսի յուրաքանչյուր խմբաքանակի համար տեղում անմիջականորեն ապահովում է սպանդի ենթակա կենդանիների նախասպանդային անասնաբուժական զննման փաստաթղթերի և դրանց մսեղիքի հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման վերաբերյալ փաստաթղթերի ու պատրաստի արտադրանքի համապատասխանության ստուգումը և տրամադրում դրա մասին տեղեկանք:

3. Ներկայացուցիչը սույն կարգի 2-րդ կետում նշված տեղեկանքում կատարում է նաև նշումներ Հայաստանի Հանրապետություն արտահանվող գոմեշի մսի յուրաքանչյուր խմբաքանակն արտադրող կազմակերպության անվանման, հաշիվ-ապրանքագրի համարի, բեռնարկղերի (կոնտեյներների), Հնդկաստանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից տրված՝ առողջության սերտիֆիկատի հաշվառման տվյալների վերաբերյալ: Տեղեկանքը պետք է լինի կնքված, ներկայացուցչի կողմից ստորագրված ամսաթվի, ամսվա և տարեթվի վերաբերյալ նշումով, ինչպես նաև պետք է ունենա հերթական գրանցման համար, որը պետք է արտացոլվի հատուկ վարվող գրանցամատյանում:

4. Ներկայացուցչին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

5. Ներկայացուցիչը պետք է ունենա սննդի անվտանգության, հիգիենիկ և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառի համապատասխան գիտելիքներ և տիրապետի անգլերենին:

6. Ներկայացուցչի հետ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր է կնքում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից լիազորված անձը:

7. Ներկայացուցչի հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի և Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ:

8. Ներկայացուցիչն ունի իր պաշտոնի անվանմամբ կնիք և ձևաթուղթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ